

# Հայ գրականության հանրապետական օլիմպիադայի հարցաշարեր XI դասարան

## Պատասխաններ

1. Առաջին ենթահարցի պատասխանը պետք է գրի աշակերտը:

«Անուշ» պոեմը ոչ միայն Թումանյանի, այլև հայ և համաշխարհային գրականությունների հանճարեղ գործերից է. անմրցելի են հայ հին կյանքի և մեր ժողովրդի հոգևոր գեղեցկությունների նկարագրությունները, սիրո մաքրամաքուր դրսևորումները, այդ սիրո կործանման պատճառի՝ անհեթեթ դիպվածի հոգեբանական հզոր վերլուծությունը: Միայն թումանյանական հանճարեղ խորությամբ կարելի էր ստեղծել այս սքանչելիքը՝ ունենալով մի «պարզ» սյուժե: Պոեմն աչքի չի ընկնում հերոսների առատությամբ, բայց մի քանի վրձնահարված, և կերպարն ասես շնչավորվում է, դառնում ընթերցողի մտերիմը: Թումանյանն առանձնապես չի նկարագրում հերոսների արտաքինը. նա նրանց ներկայացնում է գործողության մեջ՝ ջրի ճանապարհին, հարսանիքի տեսարանում, գաղտնի հանդիպելիս, կարոտի պահին, անդամանելի վշտի տեսարանում և այլն: Արտաքին նկարագիրը ժլատ, թերասածություններով հարուստ: Ահա Անուշը՝ Նախերգանքում՝ Ափսո՛ս, Անու՛շ, սարի ծաղիկ, Ափսո՛ս իգիթ քո յարին, Ափսո՛ս բոյիդ թելիկ-մելիկ, Ափսո՛ս էդ ծով աչքերին ..... Այնուհետև՝ Աղջի՛, անասոված, նստի՛ր վրանում, ի՞նչ ես դուրս գալիս խելքամաղ անում, Աշուղ ես շինել, չեմ հանգստանում.... Աղջի, բախտավոր, Երնեկ քո սերին, Քու սարի սովոր սև- սև աչքերին... Մեռնեմ գարունքիդ, Ծաղկած գարուն ես... Եվ գուր է Անուշն իր շունչը պահած, Սառել ու կանգնել ինչպես մի պատկեր

Ա՛յ սարի աղջիկ, Ա՛յ սիրուն աղջիկ, Ա՛յ դու կարմրաթուշ, Թուխամազ Անուշ.....

..... Ո՛ւր կորար, Անու՛շ, ա՛յ մազդ կտրած.....

Ասում են՝ Ուռին Աղջիկ էր ինձ պես..... Ու մազերն անկարգ տված թիկունքով Ու ցրված շիկնած այտերի վրան, Դուրս եկավ թեթև ամպերի տակից Անուշը՝ փախած եղնիկի նման... Հոգեվիճակային՝ Ա՛խ սիրտս, նանի՛, չգիտեմ ընչի, Մին լաց է լինում սևակնա՛ծ տխու՛ր, Մին թև է առնում, ուզում է թռչի, Չգիտեմ՝ թե ուր, չգիտեմ՝ թե ուր..... Ի՞նչ անի անքուն, անհանգիստ բալեդ.. ..Խեղճը դողալով՝ Անհույս կռացավ, Դարդից չորացավ... Ա՛խ, չէ՛, ես գիտեմ, որ ես բախտ չունեմ... Դողում է պաղ նրա ձենից Իմ սիրտը՝ սև ու տխուր.....

Այս և նմանատիպ բոլոր բնութագրումները ներկայացնում են մի աստվածային գեղեցիկ ու անողորմաբար դժբախտ սիրո պատմություն, որ կործանվեց ոչ միայն անհեթեթ դիպվածի պատճառով, այլև նահապետական բարքերի, նոր իրավունքներ ստացող բարոյական բարքերի՝ բոլոր սրբությունները կործանող ուժի առջև: Եվ «անհաս Արարատը մեր քերթության», երես թեքելով բարոյական աղետներից, երկրից դուրս է հյուսում հավերժական սիրո պատմությունը՝ Երկնքի անհուն, հեռու խորքերում...

2. Հայ գրականության Վարպետի՝ (Եղիշե Չարենցն է այդպես կոչել Իսահակյանին) Ավետիք Իսահակյանի ստեղծագործության գագաթն է «Աբու- Լալա Մահարի» քնարական պոեմը, որի հերոսի նախաստիպը միջնադարի արաբ բանաստեղծը՝ Աբու-լ-ալա-ալ Մահարին է: Այն գրվել է մի պոռթկումով, բայց նրա նախահիմքերը կային դեռևս 1900- ական թվականներին գրված բանաստեղծություններում (Ե՛վ անապատում, և՛ հավերժական, 1901), (Օտա ր, ամայի՛ ճամփեքի վրա, 1903), (Բադերը վայրի թռան շվարած, 1905), (Ես կուզեի արևավառ անապատը ամայի, 1907) և այլն: Այս պոեմը Իսահակյանի ստեղծագործության կիզակետն է, նրա տրամադրությունների, հասարակության նկատմամբ խոր դժգոհության ու հիասթափության ամփոփում: «Աբու-Լալա Մահարի» պոեմը և՛ իր բովանդակությամբ, և՛ ժանրային ձևով բոլորովին նոր խոսք էր. այն ձևով «արևելյան» է այնքանով, որքանով բանաստեղծը

օգտագործել է արևելյան պոեզիայի հանգավորումը, իսկ բովանդակությամբ փիլիսոփայական է, քանի որ քննում է մարդկային հասարակության բոլոր ոլորտները՝ տալով սպառիչ պատասխան: Ավելի դյուրին հասկանալու համար, թե որն է Իսահակյանի անհուն դժգոհության ու հիասթափության պատճառը, դիմենք հեղինակին: 1938-ին նա գրականագետ Արամ Ինճիկյանին պատմել է...«Տիրող կարգերի և օրենքների դեմ բողոքը, դժգոհությունը իմ մեջ առաջ էլ կար: Արտահայտության ձև էի որոնում: 1909 թ.սեպտեմբերն էր: Բանտից դուրս էի եկել գրավով, բայց դեռ դատի տակ էի: Ալեքսանդրի գնացքով Երևան էի գալիս: Նահանգական ժանդարմական վարչության կողմից կանչված էի հարցաքննության: Մեքենավարը ծանոթ գյուրեցի էր, անցել էի մոտը, կանգնել լոկոմոտիվի վրա, նայում էի հեռուն՝ առաջ սուրացող գնացքի ուղղությամբ, ու խորհում էի.- գնացքն այսպես սուրար միշտ, անդադրում, տաներ ինձ հեռու, բոլոր պետություններից, իշխանություններից ու օրենքներից, դատից ու դատաստանից հեռու՛, հեռու՛...«Գնա՛, գնա՛,- ասում էի մտքում,- բանտերից ու բերդերից, կաշկանդումներից ու ճնշումներից հեռու տար ինձ»: Եվ երբ գնացքը Սարդարապատի անապատը մտավ, կիսամթնում՝ հորիզոնի վրա, ուրվագծվեց ուղտերի մի քարավան :

«Աբու- Լալայի» պատկերը պատրաստ էր...

Վերադարձիս մեր գյուղում՝ Ղազարապատում, երեք օրվա մեջ գրեցի»:

Դիմելով միջնադարի արաբ բանաստեղծի կերպարին՝ Իսահակյանն ասել է.«Միայն էությունն էմ առել, իմ էությունը միևնույն ժամանակ»: Գերմանացի մեծ փիլիսոփա Նիցշեի Զրադաշտից ներշնչվել է միայն քննադատական ոգով՝ մերկացնելու հասարակական արատները: Իսահակյանը , մերժելով ամեն ինչ, չի մերժում կյանքի աղբյուրը՝ մորը, նա արևացնում է մորը, և արևն է մայրացնում՝ հաստատելով կյանքի ու գեղեցկության հաղթանակը:

3.Հայ գրականության գրական ֆիդային Դանիել Վարուժանն է՝ ցեղին սրտի թարգմանը, որ իր գրիչը իր սրտի մեջ է թաթախել ու արյունով գրել հայրենիքի ողբերգությունը:«Ցեղին սիրտը» ժողովածուն գերազանցորեն կազմված էր հայրենասիրական բանաստեղծություններից: «Ձոն» բանաստեղծությունը ամբողջովին բացահայտում է գրքի բովանդակությունը՝ հին հայրենիք, պանդխտություն, ազատագրական շարժման զոհեր, ավերված օջախ և պայքարի ու վրեժի կոչ. նա լսում է ցեղի սրտի զարկերակը, «երբ հայությունը կիսեղիվեր սուրի և սովի մղձավանձին մեջ... Ես նախընտրեցի երգել ցեղին սիրտը, որուն բախյունները կզգայի իմ մեջս, իմ սեփական արյունիս խորը: Հայությունը կուլար և կմոնչեր իմ մեջս»: Եվ նա դարձավ այդ պայքարի ֆիդային:

Նշյալ հերոսները «Հարձը» պոեմի հերոսներն են: Այս պոեմի պատմական ատաղձը Քերթոզահոր Պատմության մեջ եղած փաստի հիշատակությունն է հայ իշխան Տրդատ իշխանի և վարձակի՝ Նազենիկի առևանգման վերաբերյալ: Այս պոեմը վայելքի, գեղեցկության, սիրո փառաբանություն է, հեթանոսական դարերի կատարյալ մարդու ասպետականության հակադրումը ժամանակի անբարո բարքերին, կեղծիքին, թշնամանքին: «Ասպետական դարերը» վկայակոչվում են «Ոսկե հորթի» ժամանակների հեքելու նպատակով:

Փա՛ռք քեզի միշտ, ո՛վ դարեր ասպետական կենցաղին,

Ուր մարդիկ հզոր և անկեղծ էին նման զինիին...

«Հարձը» պոեմը Վարուժանի պոեզիայի գագաթներից է, հենց այս պոեմում է առավել հասկանալի բանաստեղծի դավանանքը՝ «ցավն հաճույքին և հաճույքները ցավին»: Մա բանաստեղծի երկփեղկվածությունը հասկանալու լավագույն բանալին է հենց այ՛ս կերպարների միջոցով:

4.Ատոմ Յարճանյանը՝ Միամանթոն(այս անունով նրան կնքել է Ակնի դպրոցի տեսուչ, տաղանդավոր բանահավաք, եպիսկոպոս Գարեգին Սրվանձտյանցը), ծնվել է Ակնում՝ անտունիների բնօրրանում, հարուստ ակնավաճառի ընտանիքում: Եղել է սիրված ու

գուրգուրված գավակ ու աշակերտ՝ երազկոտ, իքնամփոփ, յուրահատուկ: Այս հատկանիշներով էլ մտավ հայ գրականության շքամուտքից՝ «վառելով հույսի և հոգեվարքի ջահեր», «հայրենի հրավեր» կարդալով քաջագնիվ ու անձնուրաց հայորդիներին: Ապրեց գեղեցիկ ու ողբերգական, սպասելով «կարմիր լուրերի», որ չհասան նրան Այաշի բանտում ու Չանկրի անապատում: Նրան անվանել են հրաբորբոք տաղանդ, նոր ժամանակների Նարեկացի, կարապանման էակ, նոր ժամանակների մարգարե, առնական խիզախության փողհար: Միամանթոն ապրում էր իր ժողովրդի ճակատագրով, արձագանքում էր հայկական ջարդերին՝ «արյուն է, որ կտեսնեմ». արյան համ առած խուժանի անգուգական բնութագրությունն է «Պարը» բանաստեղծությունը, որտեղ մի գերմանուհի սոսկումով պատմում է 20 մերկ հայուհիներին մտրակներով քշող թուրք խուժանի մասին, որ ստիպում էին հայուհիներին պարել, և քարյուղ են լցնում նրանց վրա ու կրակի տալիս: Գերմանուհին, որ խնամում էր մեռնող հիվանդին, նախանձում է նրան, որ ականատես չի եղել այդ զարհուրելի տեսարանին և սարսափահար հարցնում է. «Ինչո՞վ փորեմ աչքերս, ըսե, ինչո՞վ», և պոռնիկ դարի ճակատին է դաջում իր գայրույթի հանրահայտ անեծքը՝ «Ով մարդկային արդարություն, թող որ թքնեմ քու ճակատիդ»: Այսօր էլ նույնն է կատարվում. «քաղաքակիրթ» աշխարհի անտարբեր աչքի առաջ իմ ժողովուրդը ցեղասպանվեց, իմ եղբայրները հերոսացան, իմ հողը ներկվեց անմեղ արյունով, նրանք գնացին հանդիպելու Վարուժանին ու Սևակին, Միամանթոյին ու Զոհրապին, Թլկատինցուն ու Կոմիտասին, բայց նրանց անպարտ հոգիները սպասում են արդարության ձայնին, սպասում են պատմության դատաստանին ու վերջնական հաղթանակին:

## Գնահատման չափանիշներ

1-ին հարց

Ենթահարցեր՝ 1 - 1 միավոր, 2 - 2 միավոր, 3 - 2 միավոր

2-րդ հարց

Ենթահարցեր՝ 1 - 2 - 0,5-ական միավոր, 3 - 1 միավոր, 4 - 3 միավոր

3-րդ հարց

Ենթահարցեր՝ 1 - 3 - 0,5-ական միավոր, 4 - 3,5 միավոր

4-րդ հարց - 5 միավոր

**Հանրապետական հանձնաժողովի նախագահ՝ Ս. Աբազյան**